

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ  
Հ. ԱԺԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԻ  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ  
ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆՅՈՒԹԵՐ  
(ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԹԵԶԻՄՆԵՐ)**

Ե Ր Ե Վ Ա Ն 1974





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

МАТЕРИАЛЫ ПЕРВОЙ РЕСПУБЛИКАНСКОЙ  
НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ МОЛОДЫХ ЛИНГ-  
ВИСТОВ

(ТЕЗИСЫ ДОКЛАДОВ)

ЕРЕВАН 1974

ՀԱՅԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ.ԱՋԱՒԱՅԵՒ ՍԵՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԻՏՐԱՍՏՐԻ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՔԵՐԱՆՆԻ ՆՅՈՒԹԵՐ  
/ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԲԵԶԻՄՆԵՐ/

ՀԿՅԵ  
A II

ԵՐԵՎԱՆ 1974



ԸՆԴՈՒՄԱՐԿՈՒՄՅԱՆ

ԼԵՏՎԻ ԲԱՆԱԳԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԵՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

1. Լեզվի բառապաշարի համակարգայնության հարցը գնալով ավելի ու ավելի է դրսևում գիտնականների ուշադրությանը: Արդեն ուսումնասիրվել են տարբեր լեզուների բառապաշարի առանձին մասեր, որոնցում ցայտունորեն դրսևորվում է համակարգային կազմակերպումը, և որոնք որոշակիորեն խմբավորվում են ըստ իրենց հասկացական-բառային համապատասխանությունների ու ընդհանրությունների: Սակայն բառապաշարի համակարգայնությունը նույն ձևով չի դրսևորվում նրա բոլոր շերտերում ու հատվածներում, ուստի խոչընդոտներ են առջ գալիս բառապաշարի՝ որպես մեկ ամբողջության, համակարգային բնույթը որոշելու և հետազոտելու ընթացքում: Դրանով էլ բացատրվում են այս բնագավառում նկատվող մասնակի դժվարություններն ու անորոշությունը:

2. Լեզվի բառերի ամբողջությունը ըստ հասկացական-իմաստային ընդհանրության կարելի է դասակարգել առանձին խմբերի՝ լեզվական ու արտաբերական գործոնների համադրման միջոցով: Ընդ որում, բառային մակարդակի համակարգայնությունը վերջնական լուծում է ստանում լեզվական փաստերի ու տվյալների հիման վրա: Իսկ վերջիններիս անմիջական վերլուծության համար անհրաժեշտ է նախ ուսումնասիրել բառային կազմի առանձին օղակների միավորների բնույթն ու փոխադարձ կապերը, ինչպես նաև զրանց դրսևորման օրինաչափություններն ու փոխայամանավորվածությունը համաժամանակյա և տարբերամանակյա վիճակում: Անհրաժեշտ է նաև պարզաբանել բառային միավորների հարաբերությունների ստորակարգությունը, բացահայտել բառային և իմաստային անփոփոխականների ու փոփոխականների էությունը, բնորոշ գծերն ու փոխհարաբերությունները: Լեզվի բառա-իմաստային համակարգի ուսումնասիրության ժամանակ պետք է հաշվի առնել, որ բառապաշարի՝ որպես առանձին լեզվական մակարդակի, համակարգային բնույթի կարևոր հատկանիշներն են <sup>հեղ</sup>բառի կամ բառույթի պատկանելությունն է կառուցվածքորեն սահ-

մանափակված որոշակի բառ-իմաստային խմբի և նրա զրկված դիրքը ավյալ բառախմբի այս կամ այն ենթախմբում: Այսպիսով, բառային շարքի մեջ մշտ-  
նոդ և նրա բաղադրամասը հանդիսացող բառ-միավորները <sup>վ</sup>զնվում են որոշակի  
ստորակարգման հարաբերության մեջ, որը և ստեղծում է լեզվի համաժամա-  
նակյա կտրվածքում բառի իմաստային կշիռն ու համարժեքությունը:

3. Բառի նշանակությունը բնորոշվում է արտաքին իրականության երևույթ-  
ների ու զիտակցության մեջ նրանց արտացոլումը հանդիմացող հասկացու-  
թյունների առանձնահատկություններով, բառի իմաստը լայն առումով հասա-  
րակության զիտակցության մեջ արտաբերված իրականության արտահայտու-  
թյունն է: Սակայն այս հասկացմանը չի բացառում նրա ինքնավար բառային  
|լեզուիական| նշանակության, լեզվական-բառային յուրահատուկ արժեքի գո-  
յությունը, նրա փոխադամանավորվածությունն ու փոխներգործությունը բա-  
ռային համակարգի մակարդակում: Ուստի և բառային համակարգի ուսումնասիր-  
ման և դասակարգման համար պետք է հաշվի առնել բառի ողջ իմաստային բո-  
վանդակությունը և հենվել բառի ունեցած ինչպես լեզվական, այնպես էլ  
արտաբերված հատկանիշների վրա:

4. Բառի իմաստաբանական հետազոտության գլխավոր նպատակը նրա բո-  
վանդակության երեք հիմնական տարրերի՝ նշանի, բառային հասկացության  
և նշանակելիի համառոտ դիտարկումն է: Այս տեսանկյունով բառի լրիվ  
և բազմակողմանի բնութագրումը հնարավոր է միայն հարացուցային և շարա-  
կարգային սպառիչ հետազոտության միջոցով, որը կբացահայտի բառի բոլոր  
էական իմաստային և ձևական հատկանիշները, նրա տեղը հարացուցային շար-  
քում և գործառնությունը շարակարգային մակարդակում: Բառային հարացույ-  
ցը, որը բառային ենթահամակարգերի ստորակարգային կառուցվածքն է, իր  
մեջ ընդգրկում է բացի լեզվականից նաև արտաբերված տարրեր, իսկ բա-

ռային շարակարգը բառային միավորների գործառույթունն է խոսքային շնչ-  
թայում, ընդ որում, այդ երկուսի փոխհարաբերության մեջ դրսևորվում է  
բառապաշարի համակարգայնությունը, որն իր հերթին ընդհանուրի և առան-  
ձինի հարաբերության դրսևորումն է բառի մակարդակում: Լեզվի բառապաշա-  
րը իր զարգացման յուրաքանչյուր համաժամանակյա վիճակում բնորոշվում  
է համակարգայնության որոշակի հատկանիշներով: այն կազմված է ոչ թե  
բառերի մի անկանոն, անկապ շարքից, այլ իմաստաբանորեն և կառուցվածքո-  
րեն միմյանց հետ հարաբերվող բառախմբերից, որոնք Լեզվի տվյալ կտրված-  
քում հանդես են գալիս որպես որոշ առումով հաստատուն և վերջնական մի  
ամբողջություն:

5. Այժմ իմաստաբանական հետազոտման մեթոդը հիմնված է գլխավորա-  
պես ինդուկտիվ ընդհանրացման սկզբունքի վրա: Դա՛նի՛ որ անհնարին է ընդ-  
գրկել բնական Լեզվի ողջ բառային կազմը ամբողջությամբ, ուստի նրանում  
առանձնացվում են որոշ իմաստային խմբեր կամ շարքեր, ուսումնասիրվում  
է նրանց ներքին իմաստային կառուցվածքը, համադրվում և տեղադրվում են  
բոլոր տարրական իմաստները, բացահայտվում են նրանց զուգորդման կա-  
նոնները ավելի բարդ իմաստային համալիրներում և այլն:

6. Արդի Լեզվաբանության մեջ կիրառվում են բառապաշարի դասակարգ-  
ման, բառերի իմաստային խմբավորման տարբեր սկզբունքներ, որոնց հիման  
վրա տարբերակվում են բառերի առարկայական, թեմատիկ, տերմինաբանական,  
իմաստային, բառա-իմաստային խմբեր, համանիշների, հականիշների, բառա-  
բարդման և բառակազմական շարքեր, իմաստային դաշտեր և այլն:

Մենք որպես ելակետ ընդունում ենք Լեզվի բառային համակարգի իմաս-  
տային կամ բառա-իմաստային դասակարգումը, այսինքն՝ բառերի խմբավո-  
րումը ըստ նրանց նշանակության, իմաստի միատեսակության կամ համանմա-  
նության: Այս սկզբունքով Լեզվում առանձնացվում են, օրինակ, ազգակ-  
ցության, ժամանակ, բնական երևույթներ, զգացմունքներ, գույն, շար-  
ժում արտահայտող բառեր, բույսերի, կենդանիների, մարմնի մասերի ան-  
վանումներ և այլն:

Մ. Կ. ՀԱՏԵԵԹԱՆ

ՍԱՐԱՏԵՒ ՄԱՍԵՐԻ ՀԵՂԵՎՐՈՒՄԻԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՆՐԱՏՅ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԲԵՌՈՒԹԱԳԻՐԸ

1. Հեղեվրոպական իմաստաբանության զարգացման մեջ վերջին մի քանի տասնամյակներում նկատվում է որոշ տեղաշարժ: Մշակվում և կիրառվում են իմաստաբանական հետազոտության որոշակի եղանակներ, հատուկ ուշադրություն է դարձվում իմաստային նեղ խմբերի պատկանող բառերի ուսումնասիրմանը: Այս տեսակետից զգալի աշխատանք են կատարել Հ. Թումանյանը, Հ. Ասմանզուլյանը և ուրիշները:

2. Մարմնի մասերի անվանումների իմաստային խմբի ուսումնասիրությանը կարևոր է նրանով, որ դրանք մտնում են լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ: Այդ անվանումները բավական վստահելի յուրով են հանդիսանում լեզուների ցեղակցության աստիճանը որոշելու համար:

3. Մեր հաղորդման նպատակն է տալ մարմնի մասերի հեղեվրոպական անվանումների տարածական նկարագիրը, բացահայտել այդ անվանումների զուգաբանությունների տարածքները և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլաններում:

4. Տարածական առումով այս բառերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի.

ա/ Մարմնի մասերի անվանումներ, որոնք պահպանվել են հայերենում և զերթեք բոլոր հեղեվրոպական լեզուներում. օր. հյ. ոտն, հնդ. *pad-* ալ. *pad* , , ոտք, , հն. *Πῶς*, առտ. *ποῦς* սեռ. *ποδοί* , , ոտք, , լատ. *pēs, pēdis* , , ոտք, , ումբ. *peŕci, persi* , , ոտք, , հիււ. *ἰς* , , ցած, ներքև, ինչ-որ բանի տակ, , գոթ. *fōtus* , , ոտք, , հիւսլ. *fōtr* , , ոտք, , անգլ. *fōt* , , ոտք, , հվգ. *fuoz* , , ոտք, ,

խերթ. - Լուվ. *pata-* , , ուտք , , հիեր. խերթ. *pat* , , ուտք , , Բոն. *A pe* , , ուտք , , Բոն. *B pai* , , ուտք , ,

բ/ Մարմնի մասերի անվանումներ, որոնք պահպանվել են հայերենում և մի քանի հնդեվրոպական լեզուներում. օր. հյ. նետր, հսնդ. *snānam*, ալ. *snanar*, հն. *νεῦρον*, լտ *nervus*, Բոն. *B. snaueta*

գ/ Հայերենում և մեկ-երկու լեզուներում պահպանված անվանումներ. օր. հսրուկ, լտ. *crūs*, - *uis*; հյ. գեղի, Լիւ. *gēležiune*, , գեղի, զոբ, , հսւ. \**žel za* ևուս. *železá*, սլով. *žleza*, հւերթ. *žleza* ,

Ծ. Այս խմբերից յուրաքանչյուրի մեջ մանող անվանումները կարող են հակադրուբյուններ ունենալ:

ա/ միաժամանակ և արտահայտության, և բովանդակության պլաններում, ընդ որում, արտահայտության և բովանդակության պլանների տարածքները կարող են իրար և համապատասխանել, և չհամապատասխանել: Օրինակ՝ մորուք,

\*- և բաղադրամասով առանձնացվող տարածք է՝ հյ. մորուք, հսնդ.

*smāsru* , , մորուք , , խերթ. *zama(h)kur* , , մորուք , , /հայ-հունդ-կա-խերթական/. -Օ բաղադրամասով սրանց հակադրվում են՝ հիւ. *smekh*

/\**smekā*-ից/ , , կզակ , , անգլ. *smoēras* , , շերբուկ , , Լիւ.

*smākras*, *smakrā*, , կզակ , , Լեթ. *smakrā* , , կզակ, քիմ,

/կենտա-գերմանա-բալթիական/. լտ. *māla* , , ճնոտ, մորուք, ևւր -<sup>\*</sup> Լուվ առանձնանում է՝ Այս օրինակում արտահայտության և բովանդակության պլանների տարածքներն իրար համապատասխանում են:

Կամ՝ հյ. ուլոք, հն. *ālāξ*, *ālāξ* , , արմունկուկ , , /հայ-հունական/. -<sup>\*</sup> Ե բաղադրամասով սրանց հակադրվում են՝ Լիւ. *ualektis*, ար-

մունկուկ , , հիլոս. *woaltis*, *woltis*, , արմունկուկ , , նախաբաղուկ հռուլ. *lakōto* , , արմունկ , , ևուս. *lōkotē*, , արմունկ , , Այս

օրինակում արտահայտության և բովանդակության պլանների տարածքները իրար չեն համապատասխանում:

բ/ Անվանումներ, որոնք հակադրուբյուններ ունեն միայն արտահայտու-

թյան պլանում /բովանդակութան պլանում նույնիմաստ են/:

որ. Լեարդ

Արտահայտութան պլանը չ'ընով ուղղականի մեկից են՝ հյ. Լեարդ, հհհդ.  
*yáxut*, պոս. *jigar*, ալ. *yākarā*, հս. *ἵκαρ*, լտ. *jecur*, Լեարդ  
/հայ-հնդկա-իրանա-հունա-լատինական/. Դ'ընով սեռականի մեկից են՝ աֆղ.  
*yīra*, բթ. *ἱεκαῖα*, լիտ. *jākaros*, Լեթթ. *akmas*, *aknis*, հպրուս.  
*iagno*, Լեարդ, /աֆղանա-բալթիական/:

6. Արտահայտութան պլանում որպէս տարածքային գործուն հատկանիշ-  
ներ հանդես են գալիս՝ ա/մայնդարձը, բ/ նախահար մայնավորի առկայու-  
թյունը կամ բացակայութիւնը, գ/ ածանցը և դ/ ածականը: Հնչյունական  
համապատասխանութիւնը տարածքային էական հատկանիշ չենք համարում, քա-  
նի որ չունենք օրինակներ, որտեղ հնչյունական տարբերութիւնը առաջ բե-  
րի իմաստի փոփոխութիւնն:

7. Բովանդակութան պլանում տարբերում ենք տարածքային հատկանիշնե-  
րի երեք աստիճան՝ ա/նույնիմաստութիւն, բ/հոմանիշութիւն, գ/տարիմաս-  
տութիւն: Այստեղ զգայմանականորեն հոմանիշ ենք համարում այն բառերը,  
որոնք դուրս չեն գալիս մարմնի մասերի անվանումների շրջանակից /օր.  
լանջ-թոք, այտ-ծնոտ-կրկն-մորուք և այլն/:

8. Արտահայտութան և բովանդակութան պլանների տարածքների ուսում-  
նասիրութիւնը բացահայտում է լեզուների մերձավորութան տարբեր աստի-  
ճաններ: Ըստ արտահայտութան պլանի հայերենին ամենամոտ կանգնած լե-  
զուն հունարենն է, որին հաջորդում են՝ հին հնդկերեն, իրանական, լատի-  
ներեն, սլավոնական, բալթիական, թուրքերեն /?/, իսթերեն /?/, Կելտա-  
կան, աբրաներեն:

9. Ըստ բովանդակութան պլանի հայերենին ամենամոտ կանգնած լեզուն  
հին հնդկերենն է, որից հետո գալիս են՝ իսթերեն /?/, թուրքերեն /?/,  
աբրաներեն, իրանական, լատիներեն, հունարեն, սլավոնական, գերմանական, բալ-  
թիական, Կելտական: ? նշանը ցույց է տալիս, որ այդ լեզուների տվյալ-  
ները վստահելի չեն, քանի որ նրանցից պահպանվել են քիչ թվով օրինակ-  
ներ, իսկ այն լեզուները, որոնցից պահպանվել են ընդամենը մեկ-երկու  
օրինակ, մենք ընդհանրապէս անտեսել ենք:

Հ.Վ. ՍՈՒՔԻՍՅԱՆ

ԻՆԴԵՎՐՈՒԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՑՍՄ ՈՒՍԵՐՏԵՐԻ

ԶԵՆՈՒԴԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՏՈՒՄ

1. Հնդեվրոպական լեզուների բառակազմական պրոցեսների պատմա-համեմատ-ուսումնասիրության հիմնական խնդիրներն են՝ ա/ համեմատվող լեզուների բառակազմական համակարգերի հարաբերակցության վերականգնումը՝ նրանց զարգացման տարբեր ժամանակաշրջաններում, բ/ յուրաքանչյուր համակարգում ընդհանուր հին ժառանգության և նրա առանձին տարրերի զարգացման բացահայտումը, գ/ բառակազմության այս կամ այն նոր երևույթի ծագման ժամանակագրության որոշումը:

2. Հնդեվրոպական բառի կառուցվածքի՝ հայերենի բառակազմության ներքին պահանջով պայմանավորված փոփոխությունների օրինաչափություններն ուսումնասիրելիս անհրաժեշտ է առաջնորդվել որոշակի սկզբունքներով՝ ա/ վերլուծության համար առանձնացնել այն բառերը, որոնց ծագումնային ընդհանրությունը հիմնավորվում է հնչյունական և իմաստային որոշակի համապատասխանություններով, բ/ յուրաքանչյուր ածնցյալ, առավել ևս բարդ բառի դեպքում հաշվի առնել զուգահեռ ինքնուրույն զարգացման հնարավորությունը, քանի որ ընդհանուր ծագում ունեցող միավորները ցեղակից լեզուներում կարող են սոսկ հիմք-լեզվի մեջ եղած միտումների ինքնուրույն զարգացման կամ էլ շփման և փոխառության արդյունք լինել, գ/ լեզուների երկարատև պատմության ընթացքում երբեմն անհետ կորչում են հնդեվրոպական հիմք-լեզվից ժառանգված թեթական ձևերը, և նրանց փոխարեն ստեղծվում նորերը: Իսկ երբեմն էլ ժառանգություն ստացած ձևերը հուլման կամ իմաստի մթաճման հետևանքով փոփոխվում են մինչև անճանաչելիության աստիճան: Պետք է նշված ձևերի տարբերակման և ստուգաբանման ժամանակ հանդես բերել անհրաժեշտ զգուշություն:

3. Նոր բառերի կազմության համար հնդեվրոպական լեզուն մշակել էր բառածանցման և բառաբարդման միջոցներ: Բառածանցման դեպքում զուրկ ունենալ սկզբնական բառային մեկ իմաստի հետ, որը հնագիտվում է կամ հընչյունական ընդլայնման /ածնացման/ կամ փոփոխության /հերթազայության/ միջոցով, ընդ որում ածնցումը կարող է ունենալ ոչ միայն բառակազմական այլև հիմքակազմական նշանակություն: Բառաբարդման դեպքում նոր բառի կազմությունը ձևակազմական համաձայնություն չունի /համեմայն դեպք, հնդեվրոպական լեզուներում/, հստակորեն անջրպետվում է ածնցումից, սակայն դրա փոխարեն բարդությունները երբեմն չեն տարբերակվում կայուն բառակապակցություններից, որոնք պոստնցիալ կերպով վերածվում են բարդ բառերի:

Բառաճանցման և բառաբարդման հստակ տարբերակման հնդեվրոպական լեզուներում չի խանգարում այն հանգամանքը, որ լեզվի մեջ բառակազմական ածանցների առաջացման կարևոր միջոցներից է առանձին բառերի և բառարմատների կատարած դերի փոփոխությունը՝ նրանց ձևական մաշումը և իմաստի փոփոխումը կամ միաձուլումը:

4. Հին հայերենը մի կողմից՝ համահնդեվրոպական ժամանակաշրջանից ժառանգել է ընդհանուր կառուցվածքային հատկանիշների որոշակի ամբողջություն /մասնավորապես ածանցյալ հիմքերով բառակազմական կաղապարների մյուս կողմից՝ հանդես է բերել զարգացման տարբեր ուղիներ, որոնք ըստ երևույթին առաջացել են հին հայերենի անկախ զարգացման ընթացքում՝ նրա ներքին օրինաչափությունների ժալվման հետևանքով:

Բացի այդ, հայերենում ներկայացվում են նաև մի շարք փոփոխություններ, որոնք ընդհանրապես բնույթ ունեն, առաջացել են հնդեվրոպական բոլոր լեզուներում գործող ընդհանուր տեղեկների հետևանքով /տիպաբանորեն զուգահեռ հնչյունական օրինաչափություններ/ և տարբեր աստիճաններով դիտվում են բոլոր հնդեվրոպական լեզուներում:

Այսպիսով, կարևոր է բացահայտել ոչ միայն այն տարրերը, որոնք ընդհանուր են հնդեվրոպական լեզուների հետ և զաւլիս են հիմք-լեզվից, այլև այն տարրերը, որոնք ստեղծվել են հայերենի երկարատև զարգացման ընթացքում:

5. Համեմատական ուսումնասիրության մեջ կարևոր է անվանական և բայական հիմքերում հանդես եկող ածանցների փոխությունը, մասնավորապես հին հնդեվրոպական հիմքակազմիչ ածանցների տարբերակման տեսանկյունից:

Հնդեվրոպական ածանցները կարող էին կազմել և թեմատիկ հիմքեր, և աթեմատիկ հիմքեր՝ ըստ  $\frac{e}{o}$  թեմատիկ ձայնավորների պարունակելու և չպարունակելու: հմտ. ա/ - $\xi o$ -, - $\xi o$ -, - $\kappa o$ -, թեմատիկ  
հիմքերով ածանցներ, բ/ - $\tilde{n}\tilde{e}$ -, - $\tilde{t}\tilde{e}$ -, - $(\tilde{t})\tilde{e}l$ -, աթե-  
մատիկ հիմքերով ածանցներ:

Հնդեվրոպականից հին հայերենին անցնելիս կատարվել է նախկին թեմատիկ և աթեմատիկ հիմքերի վերախմբավորում՝ ա/ ա, ի, ո, ու ձայնավորահանգ հիմք, որը կազմավորվել է թեմատիկ հիմքերի, ինչպես նաև աթեմատիկ հիմքերի առաջին / $\tilde{e}$ -ով և  $\tilde{u}$ -ով/ և երկրորդ / $\tilde{a}$ -ով/ ենթատիպերի բազայի վրա, բ/  $\tilde{n}$ ,  $\tilde{t}$ ,  $\tilde{t}l$  ձայնորդահանգ հիմք, որը ընդհանուր առմամբ աղտացուլում է հնդեվրոպական աթեմատիկ ձայնորդահանգ  $\tilde{n}$ -ով,  $\tilde{t}$ -ով և  $\tilde{t}l$ -ով հիմքերը, մասամբ նաև թեմատիկ հիմքերը /- $\tilde{n}o$ -, - $\tilde{e}ol$ :

Հին հայերենում հիմքերի վերախմբավորման հետևանքով ձայնավորահանգ ածանցավոր հիմքերի հիմքակազմիչ ձայնավորը ավելի շատ գիտակցվում է որպես վերջավորության մաս, քան հիմքակազմիչ տարր: Զայնորդահիմք կազմությունների մեջ ձայնորդն ըմբռնվում է ոչ թե որպես հիմքակազմ տարր, այլ իբրև արմատի անբաժանելի մաս:

6. Հին հայերենի բառակազմական տարրերի մեջ հսկայական փոփոխու -

Թյուներ եւ կատարվել հայերենում շեշտի՝ վերջընթեր վանկի վրա ամ-  
րանալու հետեանքով, որի պատճառով վերջին հնչյունները ընկել են:

Բառակազմութեան բնաճալարում հնդեվրոպական լեզվական ընդհանրու-  
թեան ժամանակաշրջանում սկսված՝ բառային կազմիչների սահմանների փո-  
փոխութեան պրոցեսը անմիջական ազդեցութիւն ունեցել արմատ + ածանց  
կառուցվածքային կաղապարի վրա, ինչպես հին հայերենում, այնպես էլ  
հնդեվրոպական մյուս լեզուներում:

Բառակազմական սահմանների բարեշրջութիւնը, որ նպաստել է բառի  
կառուցվածքի և բաղադրիչ տարրերի ձևափոխութեանը, պատճառ է հանդիսա-  
ցել ոչ միայն նոր ձևութեան առաջացման, այլև նրանց անհետացման.  
այսպիսով, երկու կարգի՝ գուտ հնչյունական /վերջավորութիւնների ան-  
կում/ և համաբանական փոփոխութիւնների հետեանքով անդի է ունեցել  
բառի կազմում ձևութեան սահմանների մթաճումը:

7. Համահնդեվրոպական /և ոչ միայն այդ/ ժամանակաշրջանից ժառանգ-  
ված ածանցյալ հիմքերը որպես այդպիսիք հին հայերենում պահպանվում  
են, եթե՝ ա/ տվյալ կազմութեան մեջ հիմնական ձևութեան շարունակում է  
պահպանել իր ձևութեան արժեքը և գործառնական ակտիվութիւնը, բ/ երբ  
չի խզվում պարզ հիմքով բառի և նրանից՝ առաջացած բառերի միջև եղած  
իմաստային կապը:

Լեզվի համակարգի զարգացման որոշակի փուլում ածանցյալ հիմքերը  
դառնում են պարզ, այսինքն՝ խոսողների գիտակցութեան մեջ ձևութեան  
չեն բաժանվում, եթե՝ ա/ նրանց կազմի մեջ մտնող հիմնական ձևութեան  
ընդհանուր տվյալ փուլում դադարում են իբրև այդպիսիք գործառնական,  
բ/ նրանց կազմի մեջ մտնող հիմնական ձևութեան կապը խզվում է, դը-  
րանք պահպանվում են նույն համակարգում տարբեր իմաստներով:

ԼԵԶՎԻ ԻՍՍՏԱՏԱՐԱՆԿԱՆ ԻՆՎԵՏԱՐԻԶԱՑԻԱՅԻ  
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ

1. Լեզվի բովանդակության պլանը վերջին տասնամյակներում գտնու-  
վում է Լեզվաբաններից շառերի ուշադրության կենտրոնում: Եվ դա բնական  
է: Առանց իմաստային կողմի ճանաչման անհնար է ունենալ ճիշտ և ամբող-  
ջական պատկերացում Լեզվի մասին: Բացի այդ, բովանդակության պլանի ոչ  
բավարար ուսումնասիրված էինք խոլընդոտում է այնպիսի կարևոր տեսանկյուն  
և գործնական խնդիրների լուծմանը, ինչպիսիք են մարդկային Լեզուների  
իմաստային անփոփոխելի վերահսկումը, Լեզվի և մտածողության գործունեու-  
թյան մեխանիզմի բացահայտումը և մոդելավորումը:

2. Այն ճգնաժամը, որի մեջ ընկել է մեքենական Լեզվաբանությունը,  
հաղթահարելի է միայն կառուցվածքա-նկարագրական իմաստաբանության ստեղծ-  
ման և զարգացման հիման վրա: Այդ ճանապարհի առաջին քայլը Լեզուների  
բովանդակության պլանի իմաստաբանական ինվենտարիֆիզացիան է: Ինվենտար  
ասելով հասկանում ենք, որոշ դասի բոլոր իմաստաբանական օբյեկտների  
ցանկ, որոնք նշագրված են որոշակի մետաԼեզվի օգնությամբ տրված ճշգրի-  
տությամբ և էքսպլիցիտությամբ, /Գորոդեցկի Բ.Թու. և Ուսսկին Վ.Վ./:  
Ինվենտարիֆիզացիա կոչվում է ինվենտարների կազմելը:

3. Իմաստաբանական ինվենտարների և բովանդակության պլանի ուսում-  
նասիրության մյուս փուլերի միջև կան տարբերություններ: Ինվենտարների  
համար բնորոշ է ֆակուլտատիվության ավելի բարձր աստիճան, քան իմաստա-  
բանական ուսումնասիրության մյուս փուլերի համար, ընդ որում, ֆակուլ-  
տատիվությունը կապված է ինչպես ինվենտարիֆիզացիայի նպատակների, այն-  
պես էլ նկարագրության խորության հետ: Ինվենտարիֆիզացիայի համար բնորոշ  
է իմաստաբանական կոմպլեքսների ցանկեր կազմելը: Բովանդակության պլանի

նկարագրութեան ավելի բարձր փուլերում ցանկերն ավելի շուտ իմաստաբան-  
նական միավորների նկատմամբ իմաստաբանական հարաբերութեանները կիրառ-  
ման արդուներն են և կարող են բացահայտ և հստակ շարադրել:

4. իմաստաբանական ինվենտարների նկատմամբ կարելի է դնել հետևյալ  
կարգի կառուցական պահանջները՝

ա/միասնութեան պահանջը /ինվենտարների մեջ պետք է նշվեն միասնու-  
թեյականներ/:

բ/ Լրիվութեան պահանջը /ինվենտարները պետք է Լրիվ ընդգրկեն թ-  
յականների այս կամ այն դասը/:

գ/ հավասարաչափութեան պահանջը /թեյականները պետք է նկարագրվեն  
հավասարաչափ խորութեամբ/:

դ/ տարբերակման կարողութեան պահանջը /բոլոր նշված թեյականները  
պետք է տարբերակվեն տվյալ մետաղագիտ. գիտութեամբ/:

5. ինվենտարիզացիան պետք է ունենա կոմպլեքսային բնույթ՝ այն պետք  
է կատարվի ինչպես ևստիման-իմաստաբանական, այնպես էլ բառ-իմաստաբանա-  
կան մակարդակների հարացուցային և շարակարգային պահանջներով՝ հաշվի առ-  
նելով բոլոր իմաստաբանական շերտերը:

6. Ժամանակակից լեզվաբանության մեջ դժվար է գերազանցատես ինվենտա-  
րիզացիայի դերը: Այն թեև նախնական ու միջանկյալ, բայց անհրաժեշտ և  
անխուսափելի աստիճան է կառուցվածքա-նկարագրական իմաստաբանության  
ստեղծման և զարգացման ճանապարհին: Այն մի բավականաչափ խոր և լուրջ  
իմաստաբանական ուսումնասիրության հիմքում պետք է ընկած լինի իմաստա-  
բանական ինվենտարների համակարգն այնպես, ինչպես հնչույթաբանական և  
ևստիմանական հետազոտությունները հիմնված են համապատասխան ինվեն-  
տարների վրա: իմաստաբանական ինվենտարիզացիայով մեծ չափով կորոշվի  
ապագա իմաստաբանական ուսումնասիրությունների դիապազոնը, ճշգրտութեան  
ընդ և մանրակրկիտությունը: Ներկայումս լեզվաբանությունը կանգնած է  
բոլոր լեզուների հետևողական և ամբողջական ինվենտարիզացիայի անհրաժեշ-  
տության առաջ:

ԾԱՍԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ՆՐԱՆՑ ՓՈՐՁԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մարդիկ ինչպես մի բան հայտնում, հաղորդում են ուրիշին, այնպես էլ ձգտում են անպայման իմանալ չիմացածը, տեղեկանալ ուրիշի հետ կատարվածին, կամ ճշտել գիտեցածը: Առաջինները քերականորեն ձևավորվում են պատմողական, իսկ երկրորդները՝ հարցական նախադասություներով միջոցով: Այսպիսով, հաղորդակցման իրականացման համար հաստատական և հարցական նախադասություներով առկայությունը դառնում է անհրաժեշտություն:

2. Ժամանակակից հայերենում հարցման դասակարգման ժամանակ հատկապես հաշվի ենք առել հարցական բառերի առկայությունը կամ բացակայությունը, հարցման կառուցվածքը, հնչերանգը և հարցմանը տրվող պատասխանների բունությունը: Այս հատկությունների վրա հիմնվելով՝ դասակարգման առաջին աստիճանում առանձնացվել են հարցական բառով հարցումներ և առանց հարցական բառի հարցումներ, իսկ վերջինիս մեջ էլ տարբերակվել են նաև մի շարք ենթատեսակներ:

3. Փորձառական քննության համար ուսումնասիրվել են ձայնի հետևյալ կարևոր հատկությունները՝ հաճախականության վերին սահմանը, հարցման հաճախականության գիպպադոնը, ձայնի հաճախականությունը հարցման սկզբում, ձայնի հաճախականությունը հարցման վերջում, հաճախականության աճման ինտերվալը հարցակիր վանկում, ձայնի մաքսիմալ ինտենսիվությունը, հարցման լրիվ տևողությունը, հարցակիր վանկի տևողությունը և վանկի վերջին տևողությունը:

4. Փորձառական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարցական

Նախագասության մեջ հաճախականության վերին սահմանը իր առավելագույն բարձրությունն է հասնում նախագասության այն մասում, ուր ընկնում է հարցումը, և փոփոխվում է հիմնականում 180-220 հց-ի սահմաններում: Եթե հարցումը չի ընկնում նախագասության ուղ առաջին, ուղ վերջին բառի վրա, ապա հաճախականությունը և սկզբում, և վերջում փոփոխվում է 100-110 հց-ի սահմաններում: Վանկի միջին տևողությունը փոփոխվում է հիմնականում 150-180 մ/վրկ-ի սահմաններում: Հարցակիր վանկի տևողությունը հարցումից-հարցում փոփոխվում է, շատ ավելի մեծ է հաստատող և Լրացուցիչ նախագասությունների դեպքում: Հաստատող հարցման դեպքում՝ հարցակիր վանկի ձայնավորը մոտ 2,5 անգամ ավելի տևողություն ունի, քան մյուս հարցերի հարցակիր վանկերի ձայնավորները և կազմում է ամբողջ վանկի տևողության 75 տոկոսը:

5. Մեր ուսումնասիրությունները հանգեցրել են հետևյալ եզրակացություններին՝

ա/ Ժամանակակից հայերենում հարցման տոնը կամ բարձրացող է, կամ բարձրացող-իջնող է: Եթե հարցակիր վանկը <sup>նախադասական</sup> վերջում է, ապա հիմնականում տոնը բարձրացող է, իսկ եթե վերջում չէ, ապա բարձրացող-իջնող է:

բ/ Հարցակիր վանկը կախված է ժանրակ բայի դիրքից: Որտեղ գտնվում է ժանրակ բայը՝ նրա շրջակայքում է և անպայման պետք է գտնվի հարցումը:

գ/ Հաճախականության առավելագույն բարձրությունը վերին սահմանում նկատվում է ենթադրական և երկրորդ տեսակի չեզոք հարցերի մոտ:

դ/ Հաճախականության դիսպազոնը փոխվում է 80-120 հց-ի սահմաններում: Ավելի լայն դիսպազոնը բնորոշ է ենթադրական և առաջին ու երկրորդ տեսակի չեզոք հարցերին:

ե/ Զայնի ինտենսիվությունը առավելագույն աստիճանի է հասնում հարցման սկզբում կամ միջին մասում: Վերջում այն շատ ավելի նվազում է:

Վ. Գ. ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄՅԱՆ

ՈՒԹԵՐՈՐԻ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՃԱԿԱՆ

ՊԱՍԿԱՐԿՈՒՄԸ

1. Ութերորդ դարի հայերենի էնգվառական դասակարգումը մենք կատարում ենք պատմական հայեցակետով: Վերջինս արտահայտվում է ոչ միայն մատենագրական երկերի էնգվանյութի առանձնակի՝ էնգվառական ուղորտների տարբերակումների ու բնութագրումների, այլև ընդհանրական երևույթների՝ հնչույթային, բառային, շարահյուսական պարզաբանումների ու նկարագրության: Այս դեպքում արդեն հնարավոր է կատարել էնգվանյութի ինչպես հեղինակային ոճական գնահատումներ, այնպես էլ վերջիններիս զուգամիտման ճանապարհով ոճական ուղղությունների առանձնացումներ:

2. Ութերորդ դարի բոլոր աշխատությունների էնգվական կոնկրետ քննությունների, վերջիններից բխող հեղինակային ոճերի տարբերակված համեմատությունների ու խմբավորումների, այլև այդ երկերի բովանդակության, գրական-ժանրային, թեմա. ինկառուցվածքային և այլ կարգի ընդհանրությունների զուգադրումներով տարբերակում ենք էնգվական երեք խումբ՝ ա/ բարձր /քերթողական/, բ/ միջին /գիտնականության/ և գ/ ցածր /աշխարհիկ/: Այս խմբերի ներսում ընդունում ենք ոճական ուղղություններ և ոճական շրջապատներ տարբերակումները, որոնք միմյանց նկատմամբ կարող են համատեղվել, փոխանցվել, ուղեկցվել, բացառվել, այլև միասին պայմանավորել և պայմանավորվել ոճական խմբերով: Այսպիսով, տարբերակում ենք ա/ եկեղեցական-վարձագրական, բ/ թարգմանական-քերականական և գ/ պատմագրական-գեղարվեստական երկերի էնգվանյութով բնութագրվող ոճական ուղղություններ:

3. Ութերորդ դարում եկեղեցական գրականությունն ուներ զավանաբանական և վարձագրական բովանդակություն: Այս տեսակետից տարբերակում ենք ա/ զավանաբանական /Հովհաննես Օձնեցի, Խոսրովիկ Թարգմանիչ և Ստ. Սյունեցի, շարականներ, սաղմոսներ/ և բ/ վարձագրական /Արտավազդ վարդապետ, Խոսրովիդուխտ Գողթնացի/ երկերի էնգվանյութով պայմանավորվող ոճական


Հըճապատներ:

4. Ութերորդ դարում թարգմանական գրականութունն իր ուժորտն էր ներառում ոչ միայն նոր երկերի, այլև նախկինում թարգմանված երկերի ուրիշ նոր թարգմանութուններ, որոնք աչքի են ընկնում ինչպես ինքնուրույն, այնպես էլ նախորդ թարգմանիչներից եկող ոճական միտումներով:

Մյուս կողմից, քերականական երկերի առաջընթացն այս դարում նույնպես կապված էր թարգմանական երկերի հետ թե՛ հեղինակային և թե՛ մեկնողական բնույթի առումով: Այս հիմունքով թարգմանական-քերականական ոճական ուղղության ներսում տարբերակում ենք ա/թարգմանական-մեկնողական /Ստ.Սյունեցի, Դավիթ Հյուպատոս/ և բ/ քերականական-մեկնողական /Ստ. Սյունեցի/ ոճական շրջապատներ:

5. Վերջին ոճական ուղղութունն աչքի է ընկնում ոչ միայն աշխարհիկ բովանդակությամբ, այլև լեզվական հանրի գեղարվեստականացման, ոճի պարզության, ժողովրդա-խոսակցական տարրերի, աշխարհիկ լեզվամտածողության միջոցներով ու եղանակներով: Պատմագրական-գեղարվեստական ոճական ուղղության ներսում տարբերակում ենք ա/պատմագրական /Հովհան Մամիկոնյան, Ղևոնդ/ և բ/ գրական-գեղարվեստական /Սահակադուխտ Սյունեցի, Ստ.Սյունեցի, Խոսրովիդուխտ Գողթնացի/ ոճական շրջապատներ:

6. Ութերորդ դարի հայերենի լեզվանյութը հիմնականում այսպիսի ոճական ուժորտների մեջ է ընդգրկվում. վերջիններս իրենց հերթին կարող են որոշ ստորակարգության ենթարկվել: Հանդիպում են այնպիսի գրական երկեր, որոնց լեզվանյութն ընդհանրական առումով ընդգրկվելով վերը նշված ոճական խմբերի մեջ, առանհանկի վերցրած դրսևորում են ոճական ինչ-ինչ կոնկրետ տարբերակություններ, որոնք էլ, բնականաբար, պետք է առանհանցվեն և անվանվեն իրադրական ոճական բնութագրումներով: Այսպես, եկեղեցական-վարժագրական ոճական ուղղությունը ներառում է իրավագիտական, գործարարական-նամական, թարգմանական-քերականականը՝ բժշկագիտական, փիլիսոփայական և այլ կարգի ոճեր: Պատմագրական-գեղարվեստական ոճական ուղղության ներսում նկատելի են այնպիսի ոճեր, որոնք կապվում



A 53047

են շափածո—արհաւ գեղարվեստական ոճավորումների հետ: այս առումով կարելի է տարբերակել բանաստեղծական երկի լեզվանյութով բնութագրվող ոճ, ի հակադրութուն արհաւ—պատմագրական ոճի:

### Ե. Մ. ՍԻՍՈՒՅԱՆ

ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՈՒՍԻՉՄԵՆԵՐԻ ՈՒՍՈՒՆՆԱ-

ՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ

1. 19-րդ դարը նոր էտապ է նշանավորում հայ բարբառագիտության պատմության մեջ: Այս շրջանում աճում է հետաքրքրությունը բարբառների նկատմամբ, որի արդյունքը պետք է համարել առանձին հայ բարբառների նվիրված մենագրությունների երևալը: Դրանցից առանձնապես արժեքավոր են Բ. Պատկանյանի, Ա. Տոմսոնի, Լ. Մսերյանցի աշխատությունները: Բարբառագիտական ուսումնասիրությունների վերջնական նպատակը նրանք համարում են բոլոր հայ բարբառների համադրման միջոցով և համեմատական մեթոդի օգնությամբ ընդհանուր հայերենի վերականգնումը լրնդհանուր հայերենը համարվում է այն էպոխայի լեզուն, որը նախորդել է առանձին հայ բարբառների երևան գալուն, ընդ որում, զբաբարը ևս դիտվում է իբրև մեկ հայերեն բարբառ: Այստեղից էլ բխում է ուսումնասիրության նրանց մեթոդը. բարբառների տվյալները անմիջականորեն համեմատվում են հնդեվրոպական նախալեզվի և ցեղակից այլ լեզուների ձևերի հետ, անհրաժեշտության դեպքում ընդգրկվում է նաև գրաբարի նյութը: Նյութի այսպիսի ֆունկցիոնալ ժամանակ նրանց ուշադրությունը գրավում են բարբառային այնպիսի բառեր, որոնք իրենց հնչյունական կազմով տարբերվելով գրաբարից, ավելի մոտենում են հնդեվրոպական նախալեզվի վերականգնվող ձևերին, ներկայացնելով, հայոց լեզվի/հին վիճակ, քան

գրաբարն է,, /Ա. Տոմսոն/:

2. 1900-ական թվականներից հայ բարբառագիտությամբ սկսում է զբաղվել Հ. Աճառյանը: Բարբառների փաստական հարուստ նյութի ուսումնասիրման ժամանակ նրա կողմից նկատված ոչ օրինաչափ երևույթները, շեղումները, այդ թվում նաև հնդեվրոպական ճարտերը հետազայում ամփոփվում և մանրամասն քննության են ենթարկվում նրա , Հայոց լեզվի պատմության, երկրորդ հատորում: Բարբառների՝ գրաբարից տարբեր ձև ունեցող բնիկ բառերը, որոնք իրենց հնչյունական կազմով նարող են ավելի մոտ համարվել հնդեվրոպական վերականգնված նախաձևերին, Աճառյանը բաժանում է մի քանի խմբի՝ բառասկզբում հ հավելված ունեցող բառեր, բառավերջում ն հավելվածով բառեր, ե հենարան /ի տարբերություն գրաբարի ա հենարանի/ ունեցող բառեր, այնդարձի՝ գրաբարից տարբեր աստիճան ունեցող բառեր, բառեր, որոնք գրաբար գրականության մեջ արմատական ձևով լ են ավանդված, այնինչ բարբառներում հանդիպում են, և, վերջապես, հնդեվրոպական ծագման արմատներ, որոնք պահպանվել են բարբառներում, բայց լ են գործածվել կամ, թերևս, լ են եղել հին հայերենում:

3. 1958-60 թթ. մասնագիտական պարբերականներում ծավալվեց բանավեճ՝ նվիրված հայ բարբառների և գրաբարի փոխհարաբերության, բարբառների բաղաձայնական համակարգի և այլ խնդիրների: Նպատակ է ունենալով անդրադառնալ բանավեճային բոլոր հարցերին, նշենք միայն, որ գրաբարից ավելի հին /արխիվ/ գծերի առկայությունը ժամանակակից բարբառներում արդեն անվիճելի է:

4. Հայ բարբառներում պահպանված հնդեվրոպական արխիվ գծերի մասին որոշ դիտողություններին հանդիպում ենք Ա. Ղարիբյանի աշխատություններում: Բարբառային հնագույն տարբերությունների վերաբերյալ առանձնապես ուշագրավ խոսք են ասել Վ. Վինտերը և Զ. Աղայանը:

Ժամանակակից հայ բարբառներում պահպանված արխաիկ /և ոչ միայն հնդեվրոպական բնույթի/ երևույթների ավելի մանրամասն ուսումնասիրության և կատարել Գ. Զահուկյանը իր , ,Հայ բարբառադիտության ներածություն, , աշխատության մեջ: Կիրառելով լեզվաբանական աշխարհագրության սկզբունքները և բարբառները դիտելով իբրև լեզվական հատկանիշների ամբողջություն, Զահուկյանը ընդգծում է բարբառային հատկանիշների ոչ հավասար հնությունն ու նենալու հանգամանքը: Որոշ հատկանիշներ հանդուս են հնդեվրոպական միասնության շրջանին, մյուսները կարող են լինել բարբառների՝ իրար և շրջակա լեզուների հետ ունեցած փոխադրեցության արդյունք: Բարբառների հնդեվրոպական արխաիզմները նա դասակարգում է հետևյալ կերպ: հնդարյական, փերականական և բալային:

5. Հայ բարբառների հնդեվրոպական արխաիզմների հետագա ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն բարբառների պատմության, այլև հայերենի համեմատական քերականության հետ կապված շատ հարցերի քննության համար:

#### Ե. ՄԵԼՔՈՆԵԱՆ

##### ՊԱՎԻԹ ԶԵՅՈՒՆՅԱՆ ԲԵՐԱԿԱՆԸ

1. Մեծանուն հայազետ Ն. Ադոնցը 16-րդ դարի լվովահայ գործիչ Պավիթ Զեյթունցու քերականությունը համարել է Հ. Երզնկացու քերականության սոսկական վերածումը հարց ու պատասխանի: Սակայն այդ մասեցումը այնքան էլ ճիշտ չէ: Զեյթունցին եղել է իր ժամանակի զարգացած մարդկանցից մեկը: Գ. Զահուկյանը առաջինը ըստ արժանվույն ղնահատեց նրա քերականությունը և դտավ, որ , ,Ադոնցը չափազանցել է Հովհաննես Երզնկացու ազդեցությունը: ... Զեյթունցին բոլորովին էլ Երզնկացու կոմպիլյացիայի պարզ շարադրողը չէ, այլ •գտվել է նաև այլ աղբյուրներից, որոշ հարցերում էլ հանդես բերել նշանակալից ինքնուրույնություն, ,:

2. Զեյթունցին հաճախ նկարագրում է միջին հայերենի լեզվական լիճակը, իր միտքը պարզաբանելու համար երբեմն դիմում թաթարերեն դարձվածների, տեղ-տեղ բացատրում շատ պարզ բառեր: Այս բոլորը ենթադրել է տալիս, որ Զեյթունցու գերականությունը եղել է ժամանակի պահանջները բավարարող դասագիրք: Զեյթունցու անունով մակագրված մեզ հասել է ընդամենը մի չափածո տոմար և մի ծավալուն գերականակն աշխատություն: Գերականությանը ձեռագրերում երբեմն հաջորդում է՝ Զեյթունցու գերականությունը մեզ է հասել ամբողջական և թերի արտագրություններով:

3. Գ. Ձահուլյանը, իր նպատակից դուրս ունենալով բնասիրական մանրակրկիտ ֆննդությունը, անորոշ է թողել Զեյթունցու ժամանակը: Մեր որոնումները սակայն ցույց տվեցին, որ կան շատ վստահելի ժամանակագրական տեղեկություններ՝ հեղինակային և ոչ հեղինակային հիշատակարաններ:

#### 4. Ա. ՀԱԿՈԲՉԱՆԹԱՆ

ԼԵԶԱԿԱՆ ՆԵՄԷԻ ՍՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ  
ՊԼԱՆՆԵՐԻ ԶՈՒԳՈՐԴՈՒՄԸ ՀԵԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ  
ՓՈՐՑ

Ֆերդինանդ դը Սոսյուրը լեզվական նշանը դիտում է իբրև երկկողմանի միավոր: Նշանակելի և նշանակելի միասնություն: Նշանի աղբյուրի տրոհումը նպաստում է նաև արտահայտության և բովանդակության պլանների նվազագույն միավորների առանձնացմանը /1. ԵՆՄԱԼ և ՈՐԻՇՆԵՐ/: Այստեղ է, որ ֆննդատության է արժանանում նշանի բաղադրիչ կողմերի համալսվության սոսյուրյան դրույթը, քանի որ փոխվում է հայեցակետը, և ուշադրության են առնվում լեզվի իմաստակիր միավորների անմիջանակություն և անմիաձևության հակադիր զեպքերը: Մասնավորապես Ս. Կարցևսկին ընդհանուր կերպով ֆննդության է առնում նշանների իմաստային հազեցվածություն

Անշանակիչների բազմազանության հարցերը, ցույց տալիս, որ նրանցից յուրաքանչյուրը հնարավորության մեջ համաձայն է և միաժամանակ որևէ նշանի հոմանիշային շարքի անդամ։ Այդ անհամապատասխանությունը նշանի երկու պլանների նվազագույն միավորների ֆանակային ընդգրկման անհամապատասխանության մեջ է, քանի որ մեկ նշանակիչը կարող է մի քանի նշանակելի-  
ներ պարունակել /համանունություն/, ինչպես և մեկ նշանակիչին արտահայտ-  
ված լինել մեկից ավելի նշանակիչներով /հոմանիշություն/։

Յուրաքանչյուր լեզու արտաքին տարբերությունների և նշանակու-  
թյունների մի անկրկնելի համակարգ է։ Սա բազմիցս ցույց է տրվել  
լեզվաբանների կողմից ազգակցության, գույնային շարքի և այլ իմաստաբան-  
կան դաշտերի կամ ստորակարգություն կազմող տերմինների համեմատության  
օրինակներով։

Լեզվական նշանի /ձևույթ, բառ, կառույց, նախադասություն, ևսևո-  
րած ներլեզվական և միջլեզվական տարբերությունները տիպեր են կազմում  
ըստ այդ նշանը բաղադրող նվազագույն միավորների ֆանակային հարաբերու-  
թյան։ Այդ տիպերը կարելի է բացահայտել, եթե լեզվական նշանը դիտենք  
որպես արտահայտության և բովանդակության առանցքներից ելնող անհավասար  
մեծությունների համաման կետ։ Երկու պլաններում էլ կարելի է  
երեքական հատկանիշներ առանձնացնել /նույն, նման և տարբեր/, որոնք  
միմյանց հետ զույգեր կազմելով՝ բնութագրում են նշանների տարբեր  
տիպերը։ Համեմատվող լեզվական զույգ նշանները դիտարկվում են միանշանակ  
արտահայտության և բովանդակության պլանների մեկական հատկանիշներով։  
այն է, թե՛ արտահայտության նույն, նման, տարբեր միավորները նույն,  
նման թե՛ տարբեր բովանդակություն ունեն։

| Միտ.պլան<br>Բով.պլան | Նույնություն | Նմանություն | Տարբերություն |
|----------------------|--------------|-------------|---------------|
| Նույնություն         | 1            | 2           | 3             |
| Նմանություն          | 4            | 5           | 6             |
| Տարբերություն        | 7            | 8           | 9             |

Այդուսակը 9 տարբեր պահեր /տիպեր/ է առանձնացնում, որոնք մեկնաբանվում են որոշակի լեզվական փաստերով:

1. Նույնական բովանդակություն և արտահայտություն ունեցող երկու լեզվական նշաններ նույն նշանն են: Այն կարող է լինել և՛ միանշանակ, և՛ անմիանշանակ, որովհետև սահմանափակված լինելով արտահայտության պլանում, երբեք սահմանափակված չէ պարունակվող սեմերի իմաստությունների/ քանակով:

2. Նույն նշանակելին դրսևորվում է արտահայտությամբ նման երկու նշանակիչով: Սա նույնանիշության մասնավոր դեպքն է:

3. Նույնանիշության առավել տարածված ևն է, երբ նույն նշանակելին արտահայտության պլանում տարբեր նշանակիչներով է արտահայտվում:

4. Այս վանդակում ընդգրկվում են բովանդակությամբ մոտ, նույն իմաստաբանական դաշտին կամ ստորակարգության ք պատկանող այն նման նշանակելիները, որոնք արտահայտության նույն պլանն ունեն ք բազմիմաստություն, , իմաստների համատեղում, , /Շ. Բալլի/:

5. Սրանք նման բովանդակության պլան ունեցող այն միավորներն են, որոնք նմանություն են դրսևորում նաև արտահայտության պլանում:

6. Վեցերորդ տիպը նման բովանդակության պլան և տարբեր արտահայտության պլան ունեցող միավորներով է բնորոշվում/հոմանիշներ/:

7. Այստեղ նշանները ներկայանում են արտահայտության պլանի

միևնույն միավորով, սակայն աչքի են ընկնում արտահայտած իմաստների  
անհարկությունը /համանունություն/:

Բ. Տարբեր նշանակելիներ կարող են ներկայացված լինել նման  
նշանակելիներով:

Գ. Այնպիսի զույգ նշաններ, որոնք երկու պլաններում էլ տարբեր  
են: Այստեղ հակադրված են երկու անփոփոխականներ, ի հակադրություն  
1-ին վանդակի, ուր հակադրվում էին միևնույն անփոփոխելի երկու  
փոփոխականներ:

Լեզվի համաժամանակյա կտրվածքում որպես արդյունք ներկայացող  
այս տիպերում համախմբված է եղվալան նշաններից յուրաքանչյուրը իր  
զարգացումն ունի և զարգացման իր յուրահատուկ ընթացքը: Փոփոխու-  
թյան են ենթարկվում նրա նշանակելին, նշանակիչը, երբեմն էլ երկուսը  
միաժամանակ, և նշանն անցիկում է կատարում մեկ տիպից մյուսը:

Առանձնապես տարածված և հայտնի է բազմիմաստությունից /4/ համանու-  
նություն /7/, ինչպես և նույնանիշությունից /2,3/ հոմանիշություն

/6/ գոյացումը: Անցումները կարող են կատարվել բոլոր ուղղություն-  
ներով և աղյուսակի ամեն մի տիպում խմբավորված նշանները պոտենցիալ  
հնարավորություն ունեն զարգացման հետևանքով հայտնվել ցանկացած այլ  
տիպում: Այսպիսով, յուրաքանչյուր տիպի միավոր կարող է 8 անցում  
կատարել, եթե, իհարկե, նույնական չի մնում ինքն իրեն /նշանը կարող  
է փոփոխություն չկրել/:

Ուրեմն կա անցման 72 հնարավորություն 9 որակների միջև, որն  
ընդամենը 81 դեպք է կազմում: Դրանց զգալի մասը կարող է լուսաբանվել  
լեզվի պատմությունից առնված նյութերով:

Ս. Կ. ՏԻՈԹԱՆ

**ՈՌԻՍԵՐԵՆԻ ՄԱՆԱԴԴԻՐ ՀՈՂՈՎԱԿԱՆ ԶԵՎԵՐՈՎ ԿԱՂԱՊԱՐՄԱՆԵՐԻ  
ՓՈՒՂԱԿԵՐՊՈՒՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԻ**

1. Մեր գիտակցութեան մեջ օբյեկտիվ իրականութեան մոդելավորման բարդ պրոցեսուս միահյուսվում են նրա երկու՝ կոնցեպտուալ և բառային պատկերները: Տրամաբանական մոդելը բոլոր մարդկանց համար անփոփոխ է՝ անկախ այն լեզվից, որով մարդիկ մտածում և արտահայտում են իրենց մտքերը, մինչդեռ լեզվական մոդելը փոխվում է լեզվից լեզու: Տարբեր լեզուներով խոսող մարդկանց լեզվական մոդելները այնքանով են միանման, որքանով նրանց լեզուները մոտ են իրենց բնույթով և կառուցվածքով: Ռեալիզմը նշում է, որ մի լեզվական կոդից մեկ այլին անցնելը հնարավոր է և իրականութեան մեջ կիրառվում է հատկապես այն պատճառով, որ լեզուները իզոմորֆ են: Նրանց կառուցվածքի հիմքում ընկած են միևնույն ընդհանուր սկզբունքները՝: ,Որոքան էլ երկու լեզուներ տիպաբանորեն տարբերվեն, — գրում է Վ.Զ.Պանֆիլովը, — միևնույն միտքն անտահայտելու դեպքում տրամաբանական — փրականական մակարդակում նախադասութույնները կուսենան միևնույն կառուցվածքը՝:

2. Զեկուցման մեջ փնտրվում է ռուսերենի և հայերենի աննախդիր հոլովական ձևերով արտահայտված նախադասութույնների կառուցվածքների զուգադրութույնը, փորձ է արվում բացահայտել մեկ կաղապարից մյուսը փոխանցման հնարավոր եղանակները: Ուսումնասիրվել է 123 կաղապարից բաղկացած համակարգ: Այդ կաղապարների մի մասը հայերենի համապատասխան կաղապարների նկատմամբ շարահյուսական մակարդակում իզոմորֆ են, այսինքն՝ նույն փրականական կառուցվածքներ և հատկանիշներ ունեցող բառերը երկու լեզուների համապատասխան կառույցներում գտնվում են միևնույն շարահյուսական կապի մեջ: Այսպիսի կաղապարների փոխակերպումը /ռուսերենից հայերեն/ կատարվում է պարզ ալգորիթմների միջոցով: Մինչդեռ մյուս՝ զգալի մասի մոտ առդ իզոմորֆիզմը բացակայում է, որը, անշուշտ, պայ-

Մանկորդս է ինչպես մեկ, այնպես էլ մյուս լեզվի անհատականությունները:  
Այս դեպքում փոխակերպվող իրականացնելու համար անհրաժեշտ է  
փոխել միջանկյալ, անցումային ազդորթմանը:

### Э.А. ГРИГОРЯН

## ИЗ ОПЫТА СОПОСТАВЛЕНИЯ РУССКИХ И АРМЯНСКИХ

### ЛИЧНЫХ ИМЕН

1. С древнейших времен как для русского, так и для армянского народа главным средством различения членов общества или семьи служили личные имена. Благодаря их исследованию становится возможным раскрыть изменения в духовной жизни и в языке народов. Отдельные личные имена являются живым памятником различных явлений в языке. Имеется тесная связь между личными именами, с одной стороны, и народными представлениями, фольклором, диалектной речью и культурным уровнем народа — с другой стороны.

2. Сопоставительный анализ личных имен дает возможность получить важные сведения об отдельных элементах культуры, ее различных сторон и аспектов. "Ничто не может так верно представлять различные перипетии нашей исторической жизни, влияния других народов, а также наши внутренние стремления, как собственные имена" /Р.Ачарян/.

3. В области сопоставительной антропонимики русского и армянского языков до сих пор не имеется каких-либо серьезных исследований.

В нашей скромной попытке сопоставить русские и армянские личные имена использован "Словарь русских личных имен" Н.А.Петровского и "Словарь армянских личных имен" Р.Ачаряна. Здесь мы ограничиваемся совершенно условным выбором из словарей всех личных имен от "А" до "Аз". Сравнение личных имен на "А" оправда-

но и интересно тем, что они не являются русскими /славянскими/ по происхождению и в большинстве своем не армянские. Особый интерес представляют способы и средства передачи одного заимствованного имени в русском и армянском языках.

Результаты анализа этимологии и структуры русских и армянских личных имен можно представить в виде следующей таблицы:

| Личные имена<br>Язык-источник | Русские |                | Армянские |                |
|-------------------------------|---------|----------------|-----------|----------------|
|                               | всего   | из них сложные | всего     | из них сложные |
